ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի՝ 2024 թվականի հուլիսի 8-ից 10-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2024թ. հուլիսի 8-ից 10-ը:

3. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների միջև ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության հարցերով աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) նիստին մասնակցություն:

Նիստին մասնակցել են նաև աշխատանքային խմբի անդամները, ԵԱՏՄ անդամ պետությունների շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչները:

5. Քննարկված թեմաները՝

2024 թ. հուլիսի 9-ին կայացած Աշխատանքային խմբի հերթական նիստի ընթացքում քննարկվել և համաձայնեցվել են օրակարգում ներառված և նախապես մշակված հարցերը և քննարկվել են վիճահարույց խնդիրները:

Աշխատանքային խմբի նիստի ընթացքում քննարկման են արժանացել Եվրասիական միջկառավարական խորհրդի 2024 թվականի հունիսի 3-ի նիստում ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների կողմից բարձրացված բաշխման նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության առնչությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առաջարկը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև «հայելային» վիճակագրական տվյալների անհամապատասխանությունների վերացման, ինչպես նաև օտարերկրյա ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների ամբողջականության և արժանահավատության հարցերը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նիստի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ Աշխատանքային խմբի անդամների, ԵԱՏՄ անդամ պետությունների շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների միջև:

Քննարկվել են ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների միջև ներմուծման մաքսատուրքերի բաշխման նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության առնչությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առաջարկի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև «հայելային» վիճակագրական տվյալների անհամապատասխանությունների վերացման, ինչպես նաև օտարերկրյա ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների ամբողջականության և արժանահավատության հարցերը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության կատարելագործման մասով մասնավորապես առաջարկվել է ապրանքների հետագծելիության մեխանիզմի ներդրման վերաբերյալ ներկայումս իրականացվող պիլոտային նախագծի ավարտից հետո ձևավորել հետագծելիության ենթակա ապրանքների առավել լայն ցանկ՝ ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին 2019 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան: Առաջարկվել է նաև լրամշակել և ընդլայնել ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման վերաբերյալ ներկայացվող դիմումում նշված տեղեկությունների կազմը և ուժեղացնել ազգային

մակարդակով վերահսկողությունը ներմուծողների և արտահանողների կողմից ներկայացվող վիճակագրական տվյալների հավաստիության նկատմամբ՝ միաժամանակ խստացնելով պատասխանատվությունը ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու համար:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքներով որոշվել է արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության մասով ԵՏՀ ներկայացնել առաջարկություններ տվյալների ամբողջականության և հավաստիության գործնական ապահովման, ինչպես նաև ԵՏՀ կողմից հանդիպման ընթացքում ներկայացված առաջարկի մասով:

Միաժամանակ որոշում է կայացվել անհրաժեշտության դեպքում անցկացնել երկկողմ հանդիպումներ՝ խնդրահարույց հարցերի քննարկման նպատակով:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նիստի արդյունքներով որոշում է կայացվել 2024 թվականի օգոստոսի 21-22-ը կազմակերպել առկա ձևաչափով հանդիպում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներկայացված առաջարկությունները քննարկելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ա. Մուրադյան

12.07.2024թ.